ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/105

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, տարբերանշանների և թևքանշանների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 20.04.2021թ.-ի թիվ 26/26-1/5972-2021 գրությամբ «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 14.04.2021թ.-ի թիվ ՊՆ/02/1949-2021 գրության հիման վրա, 20.04.2021թ.-ին «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 20.04.2021թ.-ին:

21.04.2021թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, հրապարակվել է www.gnumner.am կայքում և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2021/105 համարի ծածկագիրը:

30.04.2021թ.-ին, 06.05.2021թ.-ին, 14.05.2021թ.-ին և 20.05.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 14.05.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 20.05.2021թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 14.04.2021թ.-ի թիվ ՊՆ/02/1949-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/13» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Մետաքսկոմբինատ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից):

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.9 կետի համաձայն.

«Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխա-

նություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:»

Մասնակցի կողմից հայտով ներկայացվել է Հավելված 1.1՝ Առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիր, որում 1-ից-4-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում հստակ նշված չի եղել՝ թե գնման առարկայի արտաքին տեսքը համապատասխանում է տվյալ չափաբաժնի համար Ընթացակարգի հրավերով նախատեսված հավելվածին, թե ոչ, որը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ գնահատվել է անհամապատասխան Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Վերոնշյալ անհամապատասխանությունը շտկելու համար Մասնակցին անհրաժեշտ էր հստակ նշել համապատասխան չափաբաժնին վերաբերող կոնկրետ հավելվածի (նկարի) մասին հստակ տեղեկատվությունը, քանի որ Ընթացակարգի հրավերով սահմանված են եղել յուրաքանչյուր չափաբաժնին վերաբերող հստակ պահանջներ, իսկ մասնակցի ներկայացրած տեղեկատվությունը բավարար չի եղել Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքներին դրանց համապատասխանությունը գնահատելու համար:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 07.04.2021թ.-ին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցել վերոնշյալ մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.10 կետի համաձայն.

«Եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:»

Քանի որ «Մետաքսկոմբինատ» ՍՊ ընկերությունը չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ սահմանված ժամկետում շտկում չի ներկայացրել, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.04.2021թ. որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար (անհամապատասխան) Ընթացակարգի հրավերի պահանջներին

և մերժել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջները:

Մասնակիցը շտկված փաստաթղթերը ներկայացրել է անհամապատասխանության շտկման համար սահմանված ժամկետից ուշացումով՝ 09.04.2021թ., որի պատճառով չի քննարկվել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից:

Կից ներկայացվում է Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/13» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 21.04.2021թ.-ին գրությամբ դիմել է «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.04.2021թ.-ի թիվ 26/26-1/5972-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

04.05.2021թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում՝ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

««Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

«Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու)

կարիքների համար հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/13» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի Հավելված 1.1-ը՝ ապրանքի ամբողջական նկարագիրը, սահմանվել է հետևյալ ձևով.

Հավելված N 1.1
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/13» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՆԿԱՐԱԳԻՐ
առաջարկվող ապրանքի ամբողջական

_____-ն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/13»
մասնակցի անվանումը

ծածկագրով գնանշման հարցման շրջանակում ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	անվանումը	տեխնիկական բնութագրերը

Այնուհետև, միայն Հավելված 1-ով (ոչ Հավելված 1.1-ով) սահմանվել է ապրանքի տեխնիկական բնութագիրը, որը յուրաքանչյուր չափաբաժնի համար սահմանել է, որ ապրանքի արտաքին տեսքը համաձայն հավելվածի: Այնուհետև նշված է Հավելված 1 (կամ 2 կամ 3):

Այնուհետև, տեխնիկական բնութագրի հավելված 1-ով, 2-ով և 3-ով ներկայացված են ապրանքների նկարները:

«Մետրաքսկոմբինատ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում ներկայացված 1-2 չափաբաժինների մասով նշվել է՝ ապրանքի արտաքին տեսքը համաձայն հավելվածի, իսկ 3-4 չափաբաժինների մասով՝ ապրանքի արտաքին տեսքը համաձայն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.3-րդ կետով արձանագրվել է հետևյալ.

«Մետրաքսկոմբինատ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված 1-ից 4-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի տեխնիկական բնութագրերում հստակ նշված չէ՝ թե գնման առարկայի արտաքին տեսքը համապատասխանում է տվյալ չափաբաժնի համար նախատեսված հավելվածին, թե ոչ, որը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, ուստի անհրաժեշտ էր հստակ նշել համապատասխան չափաբաժնին վերաբերող կոնկրետ հավելվածի /նկարի/ մասին հստակ տեղեկատվությունը:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «Մետրաքսկոմբինատ» ՍՊԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար (ծանուցումը տեղի է ունեցել 07.04.2021թ., իսկ վերջաժամկետ սահմանվել է մինչև 08.04.2021թ. ներառյալ):

Նույն թիվ 3 արձանագրության 2.4 կետի համաձայն՝ «Մետրաքսկոմբինատ» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ ընդհանրապես շտկում չի ներկայացվել, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց «Մետրաքսկոմբինատ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

«Մետրաքսկոմբինատ» ՍՊԸ-ի կողմից շտկված Հավելված 1.1-ը ներկայացվել է գնահատող հանձնաժողովին 09.04.2021թ., և ուղեկցական նամակում Ընկերությունը նշել է, որ հնարավորություն չի ունեցել ծանուցումը ստուգելու ապրիլի 7-ին (ծանուցումը ուղարկելու օրը)՝ Արցախի Հանրապետությունում ապրիլի 7-ը ոչ աշխատանքային օր լինելու պատճառով, իսկ ապրիլի 8-ին ողջ թաղամասը եղել է հոսանքազրկված, որի պատճառով շտկումը հնարավոր է եղել իրականացնել և այն գնահատող հանձնաժողովին ուղարկել միայն 09.04.2021թ.:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Մետրաքսկոմբինատ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/13» ծածկագրով գնման ընթացակարգին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.3-րդ կետով արձանագրվել է, որ «Մետրաքսկոմբինատ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված 1-ից 4-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի տեխնիկական բնութագրերում հստակ նշված չէ՝ թե գնման առարկայի արտաքին տեսքը համապատասխանում է տվյալ չափաբաժնի համար նախատեսված հավելվածին, թե ոչ, որը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, ուստի անհրաժեշտ էր հստակ նշել համապատասխան չափաբաժնին վերաբերող կոնկրետ հավելվածի /նկարի/ մասին հստակ տեղեկատվությունը:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Նույն թիվ 3 արձանագրության 2.4 կետի համաձայն՝ «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ ընդհանրապես շտկում չի ներկայացվրել, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

«Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/105 ընթացակարգի հիմքերը քննելիս՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևոր հանգամանքների վրա.

1. Նախ, «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի կողմից կատարվել է շտկումը, սակայն օբյեկտիվ պատճառներով այն ուղարկվել է գնահատող հանձնաժողովին 09.04.2021թ. (08.04.2021թ. փոխարեն): Մասնավորապես, Ընկերությունը նշել է, որ հնարավորություն չի ունեցել ծանուցումը ստանալ կամ փոստը ստուգել ապրիլի 7-ին (ծանուցումը ուղարկելու օրը)՝ Արցախի Հանրապետությունում ապրիլի 7-ը ոչ աշխատանքային օր լինելու պատճառով, իսկ ապրիլի 8-ին ողջ թաղամասը եղել է հոսանքազրկված, որի պատճառով շտկումը հնարավոր է եղել իրականացնել և այն գնահատող հանձնաժողովին ուղարկել միայն 09.04.2021թ.: Այստեղ բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունանել, որ քանի որ «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն հանդիսանում է Արցախի Հանրապետության ռեզիդենտ, ապա շտկում կատարելու առումով ՍՊԸ-ն հայտնվել է ակնհայտ անհավասար պայմաններում ՀՀ ռեզիդենտ ընկերությունների հետ այն պարզ պատճառով, որ ի տարբերություն ՀՀ-ի, ապրիլի 7-ը Արցախի Հանրապետությունում եղել է ոչ աշխատանքային օր, և համապատասխանաբար ՍՊԸ-ի համար ապրիլի 7-ը եղել է ոչ աշխատանքային օր: Նման պարագայում «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն կորցրել է մեկ աշխատանքային օր՝ շտկում կատարելու համար (համապատասխան ապացույցը կցվում է):

2. Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ ըստ էության, Հավելված 1.1-ում, չի եղել պահանջ նշելու, որ ապրանքի արտաքին տեսքը համաձայն հավելվածի (կամ նշում հավելվածի համարի մասին): Այդ պահանջը ամրագրված է եղել այլ հավելվածներով, ընդ որում օրինակ հավելված 1-ում ձևակերպումը այդ մասով եղել է ոչ հստակ՝ ապրանքի արտաքին տեսքը համաձայն հավելվածի: Հավելված 1, 2, 3: Եվ նման պայմաններում, ըստ էության, չի կարելի արձանագրել, որ Հավելված 1.1-ը չի

համապատասխանում հրավերի պահանջներին՝ վերոհիշյալ հավելվածում նման պահանջ չլինելու պայմաններում: Պետք է նշել, որ Հավելված 1.1-ի օրինակելի ձևում անգամ հղում չի կատարված Ընթացակարգի հրավերի Հավելված 1, 2, 3 վրա, որ պարզ դառնա, որ այստեղ նշված բոլոր պահանջները պետք է ներառվեն Հավելված 1.1-ում:

Արդյունքում նման օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, և տասնամյակների աշխատանքային փորձ ունեցող ընկերությանը կանգնել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2021/105 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից տարբերանշանների և թևքանշանների ձեռքբերման նպատակով 22.03.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) հավելված 6-ով՝ պետության կարիքների համար տարբերանշանների և թևքանշանների մատուցման պետական գնման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) սահմանվել է, որ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով սահմանված ապրանքների արտաքին տեսքը պետք է համապատասխանի Հավելված 3-ին, 3-րդ չափաբաժնի մասով սահմանված ապրանքի արտաքին տեսքը պետք է համապատասխանի Հավելված 2-ին, իսկ 3-րդ չափաբաժնի մասով սահմանված ապրանքի արտաքին տեսքը պետք է համապատասխանի Հավելված 1-ին:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել նաև «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 07.04.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.3-րդ կետի համաձայն՝ «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Մասնակցի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված 1-ից 4-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի տեխնիկական բնութագրերում հստակ նշված չէ թե գնման առարկայի արտաքին տեսքը համապատասխանում է տվյալ չափաբաժնի համար նախատեսված հավելվածին, թե ոչ, որը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, ուստի անհրաժեշտ էր հստակ նշել համապատասխան չափաբաժնին վերաբերող կոնկրետ հավելվածի (նկարի) մասին հստակ տեղեկատվությունը:

v. Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, 07.04.2021թ.-ին որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և նույն օրը ծանուցել Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

vi. Հանձնաժողովի քարտուղարը 07.04.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի metaqskombinat@mail.ru էլ. փոստի հասցեին է ուղարկել նույնաբովանդակ ծանուցում:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ 09.04.2021թ.-ի կայացած նիստում արձանագրվել է, որ «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, որոշել է Մասնակցի հայտը մերժել:

viii. Արցախի Հանրապետության «Արցախէներգո» ՓԲԸ-ի կողմից 11.05.2021թ.-ին տրված թիվ 427 տեղեկանքի համաձայն՝ 2021թ.-ի ապրիլի 8-ին վաղ առավոտից վթարի է ենթարկվել «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի սպասարկող ենթակայանի կոմուտացիոն սարքերը, ինչի հետևանքով հոսանքազրկվել է կազմակերպության ողջ տարածքը: Վթարը վերացվել է «Արցախէներգո» ՓԲԸ-ի «Կենտրոն» մասնաճյուղի մասնագետների կողմից, իսկ աշխատանքները տևել են մինչև ուշ երեկո:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.04.2021թ.-ի թիվ 26/26-1/5972-2021 գրությամբ «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային

առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Երևանի քաղաքապետարանի կողմից առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերման նպատակով 22.03.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝

հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են

վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են հանձնաժողովի քարտուղարի գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում, այն է՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչպես նաև մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների իմաստից բխում է, որ մասնակցի ներկայացրած հայտը գնահատվում է բավարար այն դեպքում, երբ այն համապատասխանում է հրավերով նախատեսված պայմաններին:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով: Այլ կերպ ասած՝ նախ անհրաժեշտ է արձանագրել անհամապա-տասխանություն, ապա դրանից հետո նոր առաջարկել կատարելու շտկում:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանա-տվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու

համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տարբերանշանների և թևքանշանների ձեռքբերման նպատակով 22.03.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար տարբերանշանների և թևքանշանների մատուցման պետական գնման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով սահմանված ապրանքների արտաքին տեսքը պետք է համապատասխանի Հավելված 3-ին, 3-րդ չափաբաժնի մասով սահմանված ապրանքի արտաքին տեսքը պետք է համապատասխանի Հավելված 2-ին, իսկ 3-րդ չափաբաժնի մասով սահմանված ապրանքի արտաքին տեսքը պետք է համապատասխանի Հավելված 1-ին: Հանձնաժողովի 07.04.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.3-րդ կետով արձանագրվել է, որ «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Մասնակցի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված 1-ից 4-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի տեխնիկական բնութագրերում հստակ նշված չէ թե գնման առարկայի արտաքին տեսքը համապատասխանում է տվյալ չափաբաժնի համար նախատեսված հավելվածին, թե ոչ,

որը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, ուստի անհրաժեշտ էր հստակ նշել համապատասխան չափաբաժնին վերաբերող կոնկրետ հավելվածի (նկարի) մասին հստակ տեղեկատվությունը, ինչով պայմանավորված որոշում է կայացվել մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և նույն օրը ծանուցել Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարը 07.04.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի metaqskombinat@mail.ru էլ. փոստի հասցեին է ուղարկել նույնաբովանդակ ծանուցում: 09.04.2021թ.-ի կայացած նիստում արձանագրվել է, որ «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը մերժել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին, ուսումնասիրելով Արցախի Հանրապետության «Արցախէներգո» ՓԲԸ-ի կողմից 11.05.2021թ.-ին տրված թիվ 427 տեղեկանքը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, Մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու հանգամանքը պայմանավորված է եղել արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է՝ հիմք ընդունելով այն, որ 2021թ.-ի ապրիլի 8-ին վաղ առավոտից վթարի է ենթարկվել «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի սպասարկող ենթակայանի կոմուտացիոն սարքերը, ինչի հետևանքով հոսանքազրկվել է կազմակերպության ողջ տարածքը: Վթարը վերացվել է «Արցախէներգո» ՓԲԸ-ի «Կենտրոն» մասնաճյուղի մասնագետների կողմից, իսկ աշխատանքները տևել են մինչև ուշ երեկո:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վերոնշյալներով իրավական և փաստական հանգամանքների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման ընթացակարգով կամ պայմանագրով նախատեսված և ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից մասնակցի կողմից ներկայացված հայտը մերժելուն կամ պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների չկատարման հանգամանքն ելել է օբյեկտիվ հիմքերից՝ պայմանավորված 2021թ.-ի ապրիլի 8-ին վաղ առավոտից «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի սպասարկող ենթակայանի կոմուտացիոն սարքերի վթարի ենթարկվելու և կազմակերպության ողջ տարածքը հոսանքազրկվելու հանգամանքով, որի արդյունքում առաջացած պատճառներն անհնարին են դարձրել Մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը՝ վերջինիս կամքից անկախ հանգամանքներով:

Ուստի, վերոնշյալների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.04.2021թ.-ի թիվ 26/26-1/5972-2021 գրությամբ «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/105 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**